

գետոյն կայ ի կատարս քարանձաւին՝ շինեալ պայծառացոյց զբովանդակն՝ զպարիսպն եւ զեկեղեցին . եւ զամենայն զորս ի նմա կան շինուածք³ :

Եւթներորդ՝ Եայլի վարդապետն Մեղրացի, ի զեղջէն Կարճաւան կոչեցեալ, առաջնորդ Երնջակայ սուրբ Կարապետին : Որ եւ սա բազում աշխատութեամբ եւ անհանդիստ տքնութեամբ շինեաց զեկեղեցի սրբոյ Կարապետին պարսպաւն ամենայնիւ կոփուածոյ կրով ի փառս Փրկչին մերոյ եւ Աստուծոյ⁴ :

Ութերորդ՝ Հնչին եւ... Զաքարիա⁵ ի տանէս Արարատեան, ի Վաղարշապատ չո-

³ Առաքել Դաւրիթեցի (էջ 346—347) կը վերագրէ այս շինութիւնները Յակոբ Զուգայեցւոյ «որ յետ Փրկիպոսի նա եղեւ կաթողիկոս» : Աստապատու վանքին, որ նաեւ Կարմիր վանք եւ Ս. Ստեփանոս կը կոչուի, պարիսպները կը նորոգեն եւ մասամբ ի հիմանց կը շինեն, ինչպէս Դաւրիթեցի (էջ 270) կը պատմէ, Պօղոս վարդապետ Մոկացի եւ իր ընկերները : Արձանագրութիւն մը միջնապարսպին դրանդուոյն վրայ ունի տողերս (Սիսական, էջ 512) :

«Ի ԺԱՄԱՆԱԿԱ ՊԱՐՄԻՅ ԱՐՔԱՅԻՆ ՇԱՀ ԱՅԱՍԻ ՊԱՆՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ԹՈՒՄԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՌԱՋՆՈՐԴՍ, ՄԵՔ ԱՍՏԱՊԱՏԵՅԻ ՔԱՀԱՆԱՅՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՔՆ ՆՈՐՈԳԵՅԻՆՔ ԶՊԱՐԻՍՊՍ ԶԱՅՍ . ԵՒ ԸՆԿԵՐՈՔՍ ԻՄ ՇԻՆԵՅԻ(Ն)Ք ԶՊԱՐԻՍՊՍ Ի ՀԻՄԱՆՅ ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ |||| ՃՈՂ ՔԱՐԵՐՈՅՍ ԶՅՈՎԱՆԷՍ ԱՐՔ |||| :

Յակոբ վարդապետ հաւանօրէն գործակից եղած է վերոյիշեալներուն եւ շարունակած եւ ի կատար ածած անոնց սկսածը :

⁴ Իր մասին հմմտ. Դաւրիթեցի, էջ 347—348 : Հասած են իրմէ յիշատակարաններ, ուր անձամբ կը պատմէ իր գործունէութեան մասին :

⁵ Վախճանած է 1669, Յուլիս 10ին. հմմտ. Դաւրիթեցի, էջ 348—349 :